ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ադրբեջանի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Ցաւուկ Արքեպիսկոպոս Սանթուրեանի, Բաքուի Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու պատուարժան Թեմական Խորհուրդի հրաւէրով, Սեպտեմբերի 15ին՝ Շաբաթ օրը, Հայոց Հայրապետը հովուական այցելութեամբ մեկնեց Բաքու։

Այս առիթով Հայոց Հայրապետին ուղեկցում էին Վրահայոց Թեմի Առաջնորդ Տ. Գէորգ Եպիսկոպոս Սէրայտարեանը, Տ. Անանիա Վրդ. Արաբաջեանը, Վաչագան Աւետիքեան և Խաչիկ Խարազեան սարկաւագները։

Բաքուի օդանաւակայանում Հայոց Հայրապետին հանդիսաւորապէս դիմաւորեցին Թեմակալ Առաջնորդ Սրբազանը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հոգևոր հովիւ Տ. Վարդան Վարդապետ Դիլանեանը, Թեմական և եկեղեցական խորհրդի անդամները, քոյր Եկեղեցիների ներկայացուցիչները և հաւատացեալների բազմութիւնը։

Օդանաւակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին նաև Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Կրօնական Գործերի Լիազօր Տիար Աբդուլլա Ախադովը և տեղակալ՝ Սիմէոն Խլէպոյովը։

Վեհափառ Հայրապետը հանդիսաւորապէս առաջնորդուեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»ով։

Առաջնորդ Տ. Ցաւուկ Արքեպիսկոպոսը յանուն Թեմական Խորհրդի և Բաքուի հայ հաւատացեալ ժողովրդի, ողջունեց Հայոց Հայրապետի օրհնաբեր ժամանումը Բաքու և խնդրեց Նորին Սրբութեանը տալու իր օրհնութիւնը ներկայ հաւատացեալներին։

Եկեղեցական արարողութիւնից յետոյ Հայոց Հայրապետը առաջնորդուեց Բաքուի «Մոսկուա» հիւրանոցը, ուր Նրան յատկացուել էր մասնաւոր յարկաբաժին։

Սեպտեմբերի 16ին, Կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը Բաքուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցում մատուցեց հանդիսաւոր Ս. Պատարագ և քարոզեց՝ բաշխելով իր հայրապետական օրհնութիւնները։

Ս. Պատարագին ներկայ էին բազմահազար հայ հաւատացեալներ։

Ս. Պատարագի աւարտից յետոյ, ժամը 17ին, Նորին Սրբութիւնը Ռուս Պրավոսլաւ եկեղեցու հրաւէրով այցելութիւն է տալիս Բաքուի Ս. Ծննդեան Ռուսաց Եկեղեցուն, ուր աղ ու հացով դիմաւորւում է քահանայից դասի և հազարաւոր ռուս և հայ հաւատացեալների կողմից։ Ռուսաց Եկեղեցում ի պատիւ Վեհափառ Հայրապետի տրւում է հոգևոր համերգ։

Նոյն օրը երեկոյեան ժամը 20ին, «Մոսկուա» հիւրանոցի ճաշասրահում ի պատիւ Վեհափառ Հայրապետի, Ադրբեջանի հայոց Թեմը տուեց պաշտօնական ճաշկերոյթ, որին հրաւիրուել էին քոյր Եկեղեցիների, ինչպէս նաև Բաքուի կրօնական այլ դաւանանքների ներկայացուցիչներ։

Ընդունելութեանը հրաւիրուել էին նաև Կրօնական Գործերի Լիազօր Տիար Աբդուլլա Ախադովը և տեղակալ՝ Տիար Սիմէոն Խլէպոյովը։

Սեպտեմբերի 17ին, ժամը 12ին, Հայոց Հայրապետը այցելութիւն տուեց Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների Խորհրդի Նախագահի Տեղակալ Տիար Ք. Ա. Հուսէյնովին։ Հայոց Հայրապետի և Նախագահի Մեծայարգ Տեղակալի միջև տեղի ունեցաւ բարեկամական ջերմ զրոյց։

Նոյն օրը, ժամը 15ին, Հայոց Հայրապետը այցելութիւն տուեց Կրօնական Գործերի Լիազօր Տիար Աբդուլլա Ախադովին։ Հայոց Հայրապետի և յարգելի Պր. Լիազօրի միջև, ջերմ մթնոլորտում տեղի ունեցաւ հետաքրքիր զրոյց։

Սեպտեմբերի 18ին, ժամը 13ին, Հայոց Հայրապետը այցելութիւն տուեց Ադրբեջանի Շէյխ Ուլ Իսլամ Հաջի Միր Քեզեն Ֆիր Իբրահիմովին։ Երկու կրօնապետների միջև տեղի ունեցաւ շահեկան զրոյց բարեկամական մթնոլորտում։

Սեպտեմբերի 19ին, Չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առնելով, Մայր Աթոռ վերադարձաւ լաւագոյն տպաւորութիւններով։

Հայոց Հայրապետի հովուապետական սոյն այցելութիւնը Բաքուի Հայոց Թեմին հանդիսացաւ հոգևոր մխիթարութեան և ուրախութեան սրբազան առիթ Բաքուի հայութեան համար, ինչպէս նաև՝ մի նոր ներդրում ադրբեջանցի և հայ եղբայրական ժողովուրդների բարեկամութեան ամրապնդման ճանապարհին։

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

24 Սեպտեմբեր 1979 թ.
Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@